պետին բաց ի պատանուոյն. և բանն այսպէս որոշեցաւ, զի յետ գնալոյ վարդապետին աստի ապա ելցէ պատանին աստի գալ այդր...։ Վասն որպիսութեան քաղաքիս ծանիք, զի թէպէտ ամենայն ինչ յիւրում կարգի կայ (թէպէտ տասն փայն չի կայ, որ ինչ ի ժամանակս սուլթան մահմուտին), սակայն արքայ երկրիս յոյժ ատելութեամբ է ընդ ռայէից իւրոց. մահանայս որոնէ ջնջել զնոսա. վասն միոյ զալայեխի ետ կախել զպաշխափուքեահեայն պուղտանու պէյին։ Ջեալրն սիմաւոն խալֆային, որ ի խանտիլլին էառ, և տանկաց ետ։ Եասախին զգենլեաց անտանելի է. ֆէսք ի գլուխս ի մէջ խալփախից սեաւ ներկեցան. նոյնպէս և զեղին թէղլիկք ի մէջ մէստից, զի և զայսպիսիս որոնէ. և վասն այսպիսեաց զոմանս ի քիւրէկն առաքեաց։ Եւ ի վերայ այսր ամենայնի և զբազումս ի հայոց և ի հոռոմց տանկացոյց։...

1759 Նուաստ ծառայ
յօգոստոսի 19 Հ. Զաքարիայ վ. Ա.
[Կ. Պոլիս]

ՄԻԲ.

Բ

Գերաբանծար գերյարգելի Աբրահամայ մերոյ, և բարեւնապետի տեառն տեառն Յանփանենոսի վրդպ.ի ողջոյն

Թուղթ ԺԱ

... ի ժամանակս տօնանմային, ի բակն լուսաւորչի եկեղեցւոյն՝ յանկեան՝ յորում միանան որմունքն արևելեան և հիւսիսակողման, չինեցին հայք զմի փոքրիկ մատուռ դէպ յարևելս (ծախիւք ուրումն Ջերմեռանդի) յորում ի մեծահանդէս աւուրս մատուցանեն պատարագս վասն բազմութեան ժողովրդեան, որք կալով ի սրահի և ի բակն՝ որ զկնի աւագ խորանին, տեսանեն զայն պատարագ։ (Այժմ եկեսցուք ի պատմութիւնն մեր)։ Զկնի փլուցանելոյ տանկացն զՀայոց եկեղեցին որ ի պէպէք, համբարձին զգլուխս իւրեանց մերձակայ տանիքն լուսաւորչի եկեղեցւոյն, վասն նորոգ չինելոյ զմատուռն վերոգրեալ։ Իսկ հայքն տուեալ ումեմն զմի զփոքրիկ ժամացոյց, այլոց զոսկի ևն, հազիւ սակաւ ինչ լռեցուցին զնոսա։...

Մատնին կոչեալ զվոյվոտան, տայ նմա զֆէրման, այսպէս. Քրիստոնեայք ի ժամանակս տօնանմային, նորոգեցին զեկեղեցիս իւրեանց։ Արդ՝ երթ տես զեկեղեցիսն, զի ուր միայն մէրամէթ եղեալ է, կացցէ այն. և ուր նորոգ ինչ են չինեալ, փլուսցես զնոսա։ Եւ վոյվոտան կոչեաց զմեծամեծս յունացն, և եցոյց նոցա զֆէրմանն մատնիին, և ապա ասէ. եթէ ամենայն եկեղեցիքն տացեն ինձ, երկու հազարական ոսկի, ես ոչ փլուցանեմ զեկեղեցիսն, այլ չինեմ զմատնին. և եթէ ոչ տացեն, գիտասջիք զի զամենայն եկեղեցիս ձեր փլուցանեմ, որպէս զպէչիքտաշին։ Ասեն ոմանք, թէ զայս ֆէրման ետուն ի ձեռս վոյվոտային, որպէս զի ժողովեսցէ զդրամս։ Ամենեքեան յերկիւղի և ի տարակուսանս են։... Ի ժամանակիս սուլտան մահմուտին, մեծամեծքն և ունևորքն ի տանկաց, այնպէս գնային ի ճանապարհին, որպէս զի երևեսցին արքայի, և արքայն հարցցէ զնոցանէ, թէ ո՞ է։ Իսկ այժմ այնպիսիքն ի հեռուստ գնան, զի մի երևեսցին, և զի մի հարցցէ ինչ զնոցանէ թագաւորն։

1759 յօգոստ 20։
[Կ. Պոլիս] Ն. Ի. Հ. Յակոբոս վրդ. Զամչեանց. Մխիթարեան